ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

Քաղաքացիական գործ
հա. ԵԴ2/28043/02/23

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ, ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԴՌՆՓԱԿ ԴԱՏԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԿԱՐԳՈՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ, ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԴՌՆՓԱԿ ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

14.06.2024 թվականին ք.Երևանում

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի (այսուհետ նաև՝ Դատարան) դատավոր Արման Օհանյանը ուսումնասիրելով <<Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ Հայցվոր կամ <<Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա>> ՍՊԸ) ընդդեմ պատասխանող Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատասխանող կամ ՀՀ ՊՆ)՝ <<Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա>> ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կ.Բրուտյանի 17.08.2023թ. թիվ 76 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցադիմումը և դրան կից ներկայացված փաստաթղթերը.

Պ Ա Ր Զ Ե Ց
II
(ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ)

30.08.2023 թվականին <<Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա>> ՍՊԸ-ի ներկայացուցիչը հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության՝ <<Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա>> ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կ.Բրուտյանի 17.08.2023թ. թիվ 76 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

12.09.2023 թվականին Դատարանի դատավոր Ա.Բադիրյանը <<Հայցադիմումը վարույթ ընդունելու և ապացույցներ պահանջելու մասին>> որոշում է կայացրել:

29.09.2023 թվականին Պատասխանողը հայցադիմումի պատասխան և պահանջված ապացույցներ է ներկայացրել Դատարան:

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ա.Բադիրյանի՝ արձակուրդում գտնվելու հիմքով հա. ԵԴ2/28043/02/23 քաղաքացիական գործը վերաբաշխմամբ 06.06.2024 թվականին մակագրվել է Դատարանի դատավոր Ա.Օհանյանին:

11.06.2024 թվականին հա. ԵԴ2/28043/02/23 քաղաքացիական գործը հանձնվել է դատավոր Ա.Օհանյանին:

ԱՐՄԱՆ ՕՀԱՆՅԱՆ
ԴԱՏԱՎՈՐ

III

(ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ)

1. Քաղաքացիական գործը վարույթ ընդունելու և գործի քննությունը դատական նիստով իրականացնելու վերաբերյալ իրավական դիրքորոշումները.

*ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարանում գործի քննությունը, իսկ վերաքննիչ դատարանում բողոքի քննությունն անցկացվում են դատարանի անփոփոխ կազմով, բացառությամբ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերի: Դատարանի կազմը փոխվելու կամ կազմում փոփոխության դեպքում կայացվում է գործը (վերաքննիչ բողոքը) վարույթ ընդունելու մասին որոշում, և **գործի** (վերաքննիչ բողոքի) **քննություն սկսվում է սկզբից:***

Դատարանն արձանագրում է, որ սույն վեճը քննության է ենթակա ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2 գլխով սահմանված հատուկ հայցային վարույթի կարգով, որպիսի պարագայում՝ հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածը, անհրաժեշտ է Պատասխանողից պահանջել գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

*ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.9-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը սույն գլխով նախատեսված վեճերով գործերը քննում և դրանց վերաբերյալ վճիռները և որոշումները կայացնում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը գործին **մասնակցող անձի միջնորդությամբ** կամ իր նախաձեռնությամբ **եկել է եզրահանգման, որ անհրաժեշտ է գործը քննել դատական նիստում:***

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ գործը դատական նիստում քննելու հարցը կարող է լուծվել նաև հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշմամբ:

Դատարանն արձանագրում է, որ ելնելով ներկայացված վեճի և հայցապահանջի բովանդակությունից, առկա է կողմերի հետ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերի քննության անհրաժեշտություն, որպիսի պարագայում առկա է առնվազն մեկ դատական նիստ անցկացնելու անհրաժեշտություն:

2. Գործի քննությունը դռնփակ դատական վարույթի կարգով և դռնփակ դատական նիստում իրականացնելու վերաբերյալ իրավական դիրքորոշումները.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի համաձայն՝

1. Դատարանում գործը քննվում է դռնբաց դատական նիստում, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

*2. Դատավարության մասնակիցների մասնավոր կյանքի, ներառյալ՝ առևտրային գաղտնիքի, անչափահասների կամ արդարադատության շահերի, ինչպես նաև **պետական անվտանգության**, հասարակական կարգի կամ բարոյականության պաշտպանության նպատակով դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ **իր նախաձեռնությամբ դատական վարույթը** կամ դրա մի մասը **կարող է անցկացնել դռնփակ:***

3. Դատական վարույթը կամ դրա մի մասը դռնփակ անցկացնելու հարցը լուծվում է դռնփակության պայմաններում:

4. Դատական վարույթը կամ դրա մի մասը դռնփակ անցկացնելու մասին դատարանը կայացնում է որոշում:

*5. **Դռնփակ դատական նիստում գործի քննությունն իրականացվում է սույն օրենսգրքով սահմանված կանոնների պահպանմամբ:** Դատական վարույթը կամ դրա մի մասը դռնփակ նիստում քննելու դեպքում դատական նիստին իրավունք ունեն ներկա լինելու դատական նիստերի քարտուղարը, գործին մասնակցող անձինք, նրանց ներկայացուցիչները, դատական կարգադրիչները, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև վկան, փորձագետը, մասնագետը և*

ԱՐՄԱՆ ՕՀԱՆՅԱՆ
ԴԱՏԱՎՈՐ

թարգմանիչը: Նշված անձինք դատարանի կողմից ստորագրություն վերցնելու միջոցով նախազգուշացվում են օրենքով պահպանվող գաղտնի տեղեկությունները չհրապարակելու և սահմանված կարգի խախտմամբ օգտագործելու համար պատասխանատվության մասին:

6. Դռնփակ դատական նիստում տեսաձայնային հեռահաղորդակցության միջոցների կիրառումն արգելվում է:

7. Դատարանի՝ եզրափակիչ, իսկ սույն օրենսգրքով կամ Բարձրագույն դատական խորհրդի որոշմամբ նախատեսված դեպքերում նաև այլ դատական ակտերը հրապարակվում են դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով:

8. Դատական վարույթը կամ դրա մասը դռնփակ անցկացվելու դեպքում դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակվում է եզրափակիչ դատական ակտի եզրափակիչ մասը, բացառությամբ այն դեպքերի, երբ այն պարունակում է օրենքով պահպանվող գաղտնիք: Եզրափակիչ դատական ակտի՝ օրենքով պահպանվող գաղտնիք պարունակող եզրափակիչ մասը հրապարակվում է դռնփակ նիստում:

9. Դատական վարույթը կամ դրա մի մասը դատարանի որոշմամբ դռնփակ անցկացվելու դեպքում փվյալ գործի հետագա քննությունն այլ դատական ատյաններում կատարվում է դռնփակ, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանն իր նախաձեռնությամբ կամ կողմի միջնորդությամբ որոշում է կայացնում գործի քննությունը դռնբաց իրականացնելու վերաբերյալ:

<<Գնումների մասին>> օրենքի 21-րդ հոդվածի համաձայն՝

1. Փակ մրցույթը կիրառվում է, եթե գնման գործընթացը պարունակում է պետական գաղտնիք:

(...):

Դատարանն ուսումնասիրելով սույն քաղաքացիական գործի նյութերը՝ արձանագրում է, որ <<Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա>> ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կ.Բրուտյանի 17.08.2023թ. թիվ 76 որոշումը կայացվել է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՓՊՄԱՊՁԲ-19/43-ՀՀ ՊՆ-ՓՊՄԱՊՁԲ-23-7/29 ծածկագրով **փակ պարբերական մրցույթի** գնման գործընթացի շրջանակներում, իսկ <<Գնումների մասին>> օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փակ մրցույթն իրականացվում է այն դեպքում, երբ գնման գործընթացը պարունակում է **պետական գաղտնիք**, ուստի Դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործը պետք է քննել **դռնփակ դատական վարույթի կարգով, իսկ հրավիրված դատական նիստերը պետք է իրականացվեն դռնփակ դատական նիստում:**

IV
(ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ)

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 199-200 հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հա. ԵԴ2/28043/02/23 քաղաքացիական գործն ընդունել վարույթ:
2. **Հա. ԵԴ2/28043/02/23 քաղաքացիական գործը քննել դռնփակ դատական վարույթի կարգով:**
3. **Պարզաբանել կողմերին, որ՝**

- վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների հիման վրա ընկած հանգամանքների, ինչպես նաև տվյալ գործողությունների (անգործության) կատարման և որոշման

ընդունման օրենքով, այլ իրավական ակտերով սահմանված կարգը պահպանված լինելու փաստերն ապացուցելու պարտականությունը կրում է պատասխանողը.

- պատասխանողը վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների իրավաչափությունը հիմնավորող ապացույցներ կարող է ներկայացնել միայն ապացույցները պահանջելու որոշման կատարման ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ հիմնավորում է ապացույցի ներկայացման անհնարինությունը իրենից անկախ պատճառներով:

- քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11 հոդվածի համաձայն՝ պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների (բացառությամբ <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների) բողոքարկումն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված որոշումը հրապարակվելու օրվանից մինչև վեճի քննության արդյունքներով առաջին ատյանի դատարանի կայացրած եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրը:

4. Գործի քննությունն իրականացնել դատական նիստով, որը տեղի կունենա 17.07.2024 թվականին՝ ժամը 09:30-ին ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի Էրեբունու նստավայրի (հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Մ.Խորենացի 162Ա) դատական նիստերի թիվ 7 դահլիճում:

5. **Գործի քննության ընթացքում հրավիրված դատական նիստերն իրականացնել դռնփակ:**

6. **Բոլոր դատավարական փաստաթղթերը (դիրքորոշում, միջնորդություն և այլն) կազմել և գաղտնի փաստաթղթերի փաստաթղթաշրջանառության կանոններին համապատասխան ընթացակարգերի պահպանմամբ Դատարան ներկայացնել միայն նյութական եղանակով:**

7. **Կողմերին պարզաբանել, որ սույն քաղաքացիական գործը դռնփակ դատական նիստում քննելու ժամանակահատվածում արգելվում է տեսաձայնային հեռահաղորդակցության միջոցների կիրառումը:**

8. Հետագա դատավարական գործողությունների մասին գործին մասնակցող անձանց ծանուցել լրացուցիչ:

9. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ՝ Ա. ՕՀԱՆՅԱՆ